Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (9 դասաժամ), քիմիայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Ինքնակենսագրություն (Ձև 4).
5. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Փասաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. փետրվարի 8-ից մինչև փետրվարի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. փետրվարի 23-ին՝ ժամը 14^{00}-ին**, Շիրակի մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Լուսաղբյուր, 4-րդ փողոց, շենք 17:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 094862893 հեռախոսահամարով: